Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԷՊՈՒԱՐԴՈ ԷՕՐՆԵԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ»-Ի ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(12 հոկտեմբերի 2017 թ.)

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ ներկաներ.

Գոհունակ սրտով ենք մասնակցում Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից մեր ժողովրդի ու մեր Սուրբ Եկեղեցու մեծազնիվ զավակ տիար Էդուարդո Էօրնեկյանին «Հայաստանի ազգային հերոս»-ի կոչման ու պարգեւի հանձնման այս հանդիսավոր արարողությանը: Պարգեւը արժանի գնահատանք է ազգային մեր կյանքում մեծ բարերարի ավանդի ու ծառայությունների, որոնք առատ արգասիքներն են նրա բարեպաշտ հոգու եւ ջերմ ազգասիրության ու հայրենասիրության:

Փառք եւ գոհություն Ամենակալ Աստծուն, որ մեր ժողովրդին շնորհում է զավակներ, ովքեր իրենց կյանքը նվիրում ուծառայություն են դարձնումհարազատ ժողովրդին ու հայրենիքին:

Սփյուռքում ծնված շատ հայորդիների նման տիար Էօրնեկյանը չէր կարող անտարբեր մնալ հայրենիքի առջեւ ծառացած խնդիրների ու մարտահրավերների հանդեպ եւ անկախ պետականության առաջին իսկ օրից ազնիվ հանձնառությամբ իր զորակցությունը բերեց Հայաստանին ու Արցախին: Նրա բարերարությամբ կյանքի կոչված մեծածավալ ծրագրերը կարեւոր նպաստ են մեր երկրի տնտեսության զարգացման գործում, ինչպես եւ՝ նշանակալի աջակցություն կրթությանն ու մշակույթին: Սրտի գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ, որ տիար Էօրնեկյանը սատարում է մեր Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը՝ իր մեծ ավանդը բերելով հոգեւոր մեր կյանքի պայծառացմանը: Այդպիսի օրհնաբեր իրագործումներով, որոնք զորացնում ու բարօր են դարձնում մեր հայրենիքը, շենացնում ազգային-եկեղեցական կյանքը, գրվում են մեր ժողովրդի նորօրյա պատմության փառքի էջերը:

Այս պահին կցանկանայինք առանձնացնել նաեւ, որ մեր ժողովրդի բարերար զավակների նվիրումը, իրագործվող ազգանվեր ու հայրենաշեն ծրագրերը, բոլորիս համար մեծ քաջալերություն լինելով, միաժամանակ վառ օրինակ են պատանի եւ երիտասարդ հայորդիների եւ սերունդների համար: Թող այսպես լինի միշտ, թող Բարձրյալ Տերը մեր զավակներին

հանապազ շնորհի բարեպաշտության, հայրենյաց սիրո, պատասխանատվության ու նախանձախնդրության ոգի, եւ մեր կյանքից անպակաս լինի պարծանքը ազնիվ գործերի:

Այս ուրախալի առիթով Մեր ջերմագին շնորհավորանքներն ենք բերում Ձեզ, սիրելի՛ Էդուարդո, եւ մաղթում արեւշատ կյանք եւ նոր հաջողություններ՝ Ձեր եւ Էօրնեկյան բարեգործ գերդաստանի ազնիվ նախաձեռնություններին ու գործերին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Ձեզ, մեծարգո նախագահ, ազգային անդաստանում բացառիկ ծառայություններ մատուցած երախտավոր հայորդիներին պետական բարձր պարգեւների արժանացնելու համար:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ խաղաղ պահի մեր հայրենիքը եւ օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ հանուն աշխարհասփյուռ հայ կյանքի շենացման ու պայծառացման:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրհնությունը, շնորհն ու ողորմությունը այսօր եւ միշտ թող լինեն մեզ հետ. ամեն: